

Օ մայրելի բուրմուռք
 Կարգոսաց շուշանայ ,
 Հոգեզուարձ անուշակ
 Քաղցրաձայն նուագաց
 Կերպ կերպ Թռչնակաց
 Ի հիւրօրինակ եղանակ ,
 Ըրծաթի գոյն աղբերաց
 Սպիտակ սառնորակ
 Սրտի նորա էր դաճիճ՝ ու դանակ :
 Սոխակն իմ կոյր է
 Բաց 'ի վարդէ
 Այ ինչ տեսանէ :
 Սոխակին դիպան
 Բղձանապարհայն
 Օ աղկուռք զանազան ,
 Կա ոչ զոք ետես
 Այ ինչ խօսեցաւ ,
 Յոչ ինչ նայեցաւ .
 Կա զայլ ոք խնդրէր
 Յառաջէր հառաչէր
 Ըջօք բացօք զվարդն ինդրէր :
 Յանկարծ Թալկացաւ
 Կենդանի մեռաւ
 Իւշաբարձ անկաւ
 Ինդ Թփով վարդին .
 Տեսեալ զԹերթ նորին
 Ինդ պերճ՝ երանգին
 Ի կնախաբ բոսորին
 Օ գոյն շառագոյն և դեղին՝
 Տարած 'ի գետին
 Ի եծաձայն վայեաց ,
 " Սարդ իմ վարդ ձայնեաց .. ,
 Օ իւր շունչ վճարեաց :
 Ըյ անգին վարդ վարդ
 Իմ կենաց զարդ զարդ ,
 Դո՛ր Թերթիւք բարդ բարդ ,
 Իանիս լուր կարճ կարճ ,
 Քանի ես զուարճ զուարճ՝
 Տես զիմ լաց ու հառաչ .
 Օ արտօսր իմ սրբեա
 Օ իս քեզ զո՛հ արա
 Օ իմ ողբ ու լաց մեղմեա
 Ի պա Թէ ոչ մեռայց ,
 Յետոյ քոյ անագան այց ու դարձ
 Զօգնեսցեն իմոց կենաց :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ : — Այս երգս հայաստանէն
 մեր Թղթակիցն ու ազնիւ բարեկամը Պ . Գալուստ
 Շիրմազանեանը զրկեց , և կ'ըսէ Թէ որովհետեւ

հանգուցեալ Յարութիւն վարդապետ Ալամգա-
 րեանց այս երգս շատ կը սիրէր և յաճախ կ'երգէր ,
 զոր և ինքը առաջին անգամ վրաստան բերաւ ,
 անոր համար կը կարծուէր Թէ ինքը շարագրած
 ըլլայ . բայց վերջէն իմացուեցաւ որ հնուց 'ի վեր
 հայաստան կ'երգեցուի եղեր , և Թէ հեղինակն
 ո՛վ է՝ անյայտ է : Այսու ամենայնիւ վրաստան
 ինչուան հիմայ ալ այս երգս Տաշ Երուսթիւնի վար-
 դապետի կը կոչեն :

ԱՆԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Սորափրո-Թիւն Կովասեան Գաւառաց ' :

ՅԱՎՆ արկեալ զգիրս պատմութեց
 Հայոց՝ տեսանեմք զի բազումք 'ի Հայոց
 բնակեցին 'ի Սիրս , այլ Թէ յորում
 արդեօք ժամանակի տարադրեալ կամ
 գաղթեալ իցեն նոքա , ոչ ինչ գտանեմք
 ստուգիւ նշանակեալ . այլ որպէս ե-
 րևի 'ի պատմութեանց՝ 'ի Թուակա-
 նութեան Հայոց ՇՀԲ , այն է ամ
 տեառն 1123 Դաւիթ արքայ Սրաց
 պաշարեաց զԻնի Թաղաւորանիստ մնայ-
 րաքաղաքն Հայոց , և առեալ զայն՝
 գաղթեցոյց զբնակիչսն 'ի Սիրս՝ տալով
 նոցա սունս և քաղաքս բնակութեան
 և եկեղեցիս և վանորայս բազումս :
 Բայց Թուի ինձ զի և յառաջ քան զա-
 ռուրս գաղթականութեանն բազումք 'ի
 Հայոց երկուցեալ յերեսաց զանազան
 ասպատակութեց , որովք մեծն Հայաս-
 տան յաւեր եղեալ էր և յապականու-
 Թիւն , դարձեալ և 'ի պատճառս ապա-
 հովութեան փախուցեալ անկան յաշ-
 խարհն Սրաց : Եւ զայս ոչ յանձնէ
 ինչ ասեմ , այլ զվեց ամ շրջեալ իմ ա-
 ռաքելութեամբ ընդ ամենայն Սրաս-
 տան , քաջ զննեցի զամենայն՝ ստիպեալ
 'ի պարտուց պաշտամանս իմոյ , և չե-
 րեւեցան անդ վանորայք բազումք , դար-
 ձեալ և ոչ հնագոյն եկեղեցիք Հայոց ,
 բայց 'ի վանորէից ինչ և յեկեղեցեաց

1 Զբնօիրս զայս և զստուգապատումն կարա-
 գրութիւն Կովասեան գաւառացն , ստորագրեաց
 Յովհաննէս վարդապետ Տէր Ղազարեանց Արշա-
 րունի , 'ի Միաբանից սրբոյ Էջմիածնի , 'ի խնդրոյ
 Տէր Պետրոսեան Պօղոս վարդապետի , յամի 1849 :

զորս 'ի ստորև առաջի կայ ինձ նշանա-
կել ըստ իւրաքանչիւր տեղեաց : Իսկ
եթէ ասիցէ որ զի 'ի ժանեաց ամենա-
ծախ ժամանակին անհետացան նորա ,
ուչ հաւանիմ . ապա թէ ոչ գէթ նըշ-
խարք կամ տեղիք աւերածոցն երևէին .
զի աւանիկ 'ի բազում դարուց հետե-
յառաջ քան զգաղթականութիւն Հայոց
դեռ ևս կանգուն կան վանորայք 'ի
մեծն Հայաստան՝ որ է սահմանակից
Սրաց աշխարհին . բայց ինձ թուի թէ
այժմեան դաւառն Շամշատոյ , Վա-
ղախի և Սոււոյ եղէն երբեմն ընդ տե-
րութեամբ Սրաց , որպէս և աշխարհն
Վուզարաց և Տայոց , և անդ բնակեցին
Հայք , որպէս յայտնի 'ի բազում վանս-
րէիցն է և յեկեղեցեաց , և երկիրն կո-
չիւր Սրաց սուն : Եւ զի հաւաստեալ
եղև երբեմն Հայաստան աշխարհ ընդ
իշխանութեամբ Սրաց՝ յայտնի է 'ի
բանիցն Հերակի երկրորդի արքային
Սրաց , յամի տեառն 1783 յօղոստոսի
28 , յերեսներորդ իններորդ ամի թա-
գաւորութեանն իւրում . քանզի թուե-
լով զտեղիս իշխանութեան իւրոյ այս-
պէս գրէ առ կայսրուհին Ռուսաց .
« Սղորմութեամբն Բսուածոյ՝ մեք եր-
կրորդ Հերակի՝ արքայ Սրաց , և
արքայ Կախէթու , և զիսաւոր ժա-
ռանդ Սրցիսէթու , Բթաբէկու , իշ-
խեցող Խաղախու , Բորչալուու ,
Շամիսթիլու (այսինքն Շամշադի-
նու) Կախու , Շաբու , Շիրուանու ,
տիրող և հրամայող Վանձախու , Ե-
րևանու և այլոց » : Ի հաստատու-
թիւն բանիս՝ բերից զհաւաստի վրայու-
թիւն՝ տեառն Հ . Սիքայէլ վարդապե-
տի Չամէեան , որ գրէ 'ի պատմութեան
Հայոց՝ . « Բայ Վաւիթ (ասէ՛ զինի
վանելոյն զզօրս Սեւեր իշխանին Վար-
սից) առաւել ևս զօրացեալ դիմեաց և
էառ 'ի ձեռաց նորա զքաղաքս նախ-
նեաց իւրոյ՝ զորս յախշտակեալ էին
Վարսիկէն , զբազում տեղիս Վուզա-
րաց և Ստեպանոց , յորս տիրեալ էին
յառաջն թագաւորք Բղուանից , ըզ-

1 Հաս . Գ . գլուխ Բ :

« Վագ բերդ և զՏերունահանն , զՏա-
ւուշ , զՎայեան , զՎայծոն , զՍուի ,
զՏաշիր և զՎահանաբերդ . սոքա
են 'ի Սուի , 'ի Վաղախ և 'ի Շամշա-
տին և 'ի Բորչալու » : Զաւելու ևս
ասել թէ « Սուեալ Հայոց բնակելոյ
յարևելակողմն աշխարհին և գիտա-
ցեալ թէ այր բարեպաշտ է Վաւիթ ,
բազումք 'ի նոցանէ ելեալ վնային առ
նա . և նա ետ նոցա տեղի բնակութե-
և շինեաց վասն նոցա զքաղաք մի ա-
նուանեալ Վուայ կամ Վուանայ
(փոխանակ գրելոյ Վորայ՝ որ 'ի Սրաց
բարբառ թարգմանի բլուրկամբլուակ ,
որովհետև ամիոց քաղաքին շինեալ է
'ի վերայ բլրոյ) և հրաման ետ նոցա
կանգնել զեկեղեցիս և զվանորայս .
նպաստ լինելով և ծախուց նոցա յար-
քունուստ , և բնակեցոյց զնոսա յաշ-
խարհի անդ խաղաղութեամբ և յան-
դորրու » : Գրէ զարձեալ՝ թէ « Տար-
սայիճ իշխանն Սուայէլեան դադա-
րեցոյց և ետ ջնջել զպահանջողու-
թիւն հարկաց վանորէից 'ի դիւանայ
Սրաց . ուր կային գրեալ անուանը-
իւր հարիւր և յիսուն վանորէից Հայ-
աստանի » : Զայսմանէ և յայլոց բա-
նից նորա իմաստասիրել արժան է ա-
պաքէն զի զբազմութիւն Հայոց որք
զաղթեցան յՍիւոյ և յայլոց տեղեաց՝
ուչ եթէ 'ի կեդրոնի Սրաց աշխարհին
բնակեցոյց՝ այլ 'ի բունն Հայաստան ,
որ սահմանակից էր երկրի նոցա և էր
ընդ իշխանութեամբ իւրեանց , որպէս և
'ի բազմութեանէ վանորէից որք կան մին-
չև ցայժմ՝ յայտնի տեսանի : Եւ քանզի
կային սմանք որ յառաջ քան զաւուրս
մեր ընծայեցին 'ի ըստ զհամառօտ նկա-
րագիր վանորէից և եկեղեցեացն Հայոց
աշխարհին՝ որք կան 'ի մասն բաժնի
տերութեանն Սրաց , մեք զայնոսիկ
թողեալ՝ մտադիւր զխոստաբանեալն առ
'ի մէնջ տարցուք 'ի գլուխ , գրելով ինչ
ինչ զվանորէից մերոյ ազգին յաշխար-
հին Սրաց և զեկեղեցեաց : Եւ յերկա-
սիրողաց անտի զորոյ արդ իսկ յիշատա-

1 ԱՅդ . գլուխ 19 :

կեցաք՝ համարել արժան է և զՍարգիս վարդապետ Սանահնեցի Վալաբեան, որ ստորագրեաց զվանորայս և զեկեղեցիս Սեփն հայաստանի. բայց զայնքան մեծ մասն աշխարհին հայոց ՚ի մատենական միում հաւաքեալ, եթող ՚ի բաց ոչ միայն զաղատեալն ՚ի հարկաց ՚ի հարսայի՝ իշխանէն՝ զհարիւր և զսիւսուն վանորայս՝ որ համեմատելով ընդ վանորէից մեծին հայաստանի կամայնոցիկ տեղեաց յորմէ սկսանի Սարգիս վարդապետն և ուր աւարտի, իբրև զշիթ մի ՚ի դուլէ են, զորս եթող իսպառ : Վանդի սկսեալ ՚ի Սանահնէ և քերեալ զարքունական ճանապարհաւն մինչև ցաւաւուն Մրցախու՝ ստորագրեաց թերակատար . թողլով զվանորայս և զեկեղեցիս գաւառացն Վարդմանկայ, Վետաբակու, մեծին Փառխոսոյ, Տանձուտայ, Օէյվու, Վուլիստանու, Վարամուրատայ, և զայնչափ զցանկալի հնութիւնս, և այլն . մինչ զի օտարազգի աշխարհագիրք ընդակն հարեալ յապուշ կրթին ընդ այնչափ հոյակապ և անթիւ մեծագործ հնութիւնս . բայց և զայն իսկ երկասիրութիւն նորա ոչ ընդ վայր հարկանեմ . քանզի և իոստանայ յայլում մատենի տպագրութեամբ ՚ի լոյս ընծայել և զմիւս մասն հայոց աշխարհիս որ յայնկոյս Մխուրեան գետոյ :

Բայց ես ըստ բազմաժամանակեայ զննութեանցս՝ ստորագրեմ զայժմեան հանգամանս վանորէից և եկեղեցեաց և ժողովրդոց իսկ հայոց, է զի և զօտարագրեաց բնակելոց ՚ի կեդրոնի աշխարհին Սրաց՝ բաժանելով զայնոսիկ գաւառս ՚ի չորս բաժինս, ըստ չորից գաւառաց բնակութեանց հայոց, առանց յիշելոյ ինչ զայնոսիկ ՚ի բազմաթիւ գաւառաց՝ ուր չգտանի որ ՚ի համագրեաց մերոց :

Սրացն ազգ՝ միանգամայն առեալ և զինքնազուրիս ազգսն Սնգրեւաց և Վուրիայ՝ է ազգ և գաւառ յարեւել՝ սահմանակից հայոց մեծայ ՚ի հարաւոյ կուսէ, և ունի սահմանս յարեւմտից կողմանէ զՎողքիս՝ կամ զաշխարհն Ագերա-

ցւոյ կամ Չէրքէզաց, ՚ի հիւսիսոյ ըզՍարմատիա՝ յորմէ և բաժանի լերամբն Վովկասու, իսկ յարեւելոց զՂուռանս առ Վուր գետով :

Ունի Սիրք գէոս բազումն՝ զՍնգրեւ, զՎուրիա, զՍուանէթ, զՎարթլ, զՎախէթ, զՎերին և զնեղքին Վիսեխ, և զայլ բազումս . նմանապէս և քաղաքս ամուրս՝ զՏիխիս, զՍեփն, թայ՝ որ է Տիխէթայ, որ այժմ է դիւղ, ուր էր սուրբ խաչն, և պատրիարքաբանն Սրաց . ունի և ամրակառոյց բերդս ՚ի զանազան քաղաքս՝ որպէս ՚ի Վուրթայիս (այժմ աւեր է բերդ նորին) ՚ի Թիւրաւ, ՚ի Սինախ, ՚ի Աջխում, ևն . իսկ ազգք և բնակիչք Սրաց կողին միահաղոյն առեալ զամենայն լեռնական քրիստոնեայ ազգս զ()ս, զՍիւսուր, զՎշաւ, զԹուլ և այլն . Վերիացիք : Ունի Սրաստան զերիս զերեւելի և զմեծամեծ գետս՝ այն է Սիւն (զոր ոմանք Նորոխ կարծեցին) որ և ընդ բազում միոնս անցանելով անկանի ՚ի ծովն Պոնտոսի . Վուր կամ Վուր գետ, և Մլազան . նմանապէս և զայլ գետս և անտառս և զմեծամեծ լերինս և բլուրս . յորոց անուանին և ընդ ամենայն երկիր համբաւեալ է լեառն մեծ Վովկաս՝ . որ պատելով զաշխարհն Սրաց և Ղուռանից տարածի ընդ երկիրն Սարմատացւոց և Վիլիթացւոց մինչև ՚ի կողմանս հնդկայ՝ ըստ տեղեաց տեղեաց փոխելով զանուն իւր, որպէս վկայեն բազումք ՚ի պատմչացն մերոց :

Վախէթ է երկիր լեռնային անտա-

1 Քարթլոս եղբայր հայկայ նախնւոյն մերոյ՝ որում գնացեալ ՚ի մի կողմն հիւսիսոյ՝ ՚ի լեառն որ կոչի Ալմազ, և անդ շինեաց իւր տուն և ամրոց, զոր կոչեաց Որթէթ, յանուն կրտսեր որդւոյ իւրոյ, յորմէ Ուսպելեանք, ՚ի սմանէ և գաւառն ընկաւաւ զանունն :

2 է անուն աւագ որդւոյ Քարթլոսի, որ շինեալ զքաղաքն Մծիթիթայ՝ ըստ այնր ժամանակի սովորութեանն իւր անուն յորջորջեաց և զքաղաքն :

3 Միւս եղբայր դիւցազմն հայկայ՝ բնակեալ ՚ի հիւսիսակողմն մեծի լերին, յորոց անուն և լեառն կոչեցաւ :

4 Վասն այնորիկ կոչեցաւ անուն ազգին Իմէրէթ՝ ըստ այլոց Աջգաշ, կամ Բաշաշուղ, այն է Գլխիւրաց կամ Բացագլուխ, ՚ի գործոյն առեալ

ուսիսիս և արգաւանդահող, լցեալ ամե- նատեսակ բերովք ուտողոց հայաստա- նեայց աշխարհի և անուշահամ ջրովք . գտանին 'ի լերինս նորա և էրէք և վայ- րի գազանք : Առողջարար է օգ երկրին և մաքուր . և բնակիչքն են կորձալե- զուք , բայց քաղաքավարք և հիւրամե- ծարք . զնոյն լեզու բարբառին զոր միան- գամ առնուն 'ի կիր ամենայն լեռնա- կանք վայրացն :

Աշխանք (կիտալ) բազումք գտանին 'ի գաւառսն այնոսիկ յաղպէ Արաց՝ յորոց երևելին է՝ մեծ իշխանն 'Սադիան՝ զոր և պատմագիրք մեր յիշատակէն ու- րէք , և ունի զբազում արտօնութիւնս 'ի կայսերէն Առուսաց . քանզի կարէ ինք- նագլուխ ձեռնամուխ լինել 'ի մեծամեծ իրս , և սրատերազմունս անգամ ընդ մերձակայ լեռնականսն մղել , և երկու- տասան հազար տունք կան նմա 'ի ստրկութիւն ծառայութեան , որք են առ հասարակ յաղպէ Արաց , թէպէտ և գտանին իսկ ոմանք 'ի մերոյն և 'ի Հրէից : Աւնի զանմատոյց ամրոցս և բերդս և թնդանօթս և քաղաքապիւղս , և ուր գտանին զոնէ երկու կրպակք վաճառաց՝ հարկ է զի գտանիցի անդ որ 'ի մերազգեաց , քանզի և վաճառա- կանութիւն երկրին ըստ մեծի մասին 'ի ձեռս հայոց և Հրէից է :

Բնակիչք երկրին հասարակօրէն են ուժեղք , բարձրահասակք , յաղթան- զամք և յաջողակք , որպէս 'ի պատե- րազմունս՝ նոյնպէս և 'ի մշակութիւնս . հնազանդք են տեարց իւրեանց մա- հուամբ չափ , քանզի եթէ հրամայեսցէ ոմն 'ի մեծամեծաց ծառայից իւրոց հար- կանել զմերձակայն իւր , առանց իմա- նալոյ զպատճառն և առանց ժամավա- ճառ լինելոյ իսկոյն կատարէ զհրաման տեառն իւրոյ : Ստրուկք են իշխանաց ամենեքին առ հասարակ , և յոյժ ալ- քատք . չգիտեն բնաւ եթէ զիւրդ պարտ

զանուն . քանզի գրեթէ ամենեքեան են առանց գլխարկի :

1 Տոհմ սոցա համարի երկրորդ արքային Իմե- րէթայ , և երբեմն այնքան հզորացան մինչև ակն ածել արքայի իսկ իւրեանց 'ի նոցանէ :

իցէ սերմանել զցորեան , այլ առ հասա- րակ շատանան մարացորէնով և զովիով՝ . պահէն անասունս սակաւս , և տեարք անասնոյն չգիտեն եթէ որպէս արժան իցէ բաժանել զիւզն 'ի մաճնոյ . նա մանաւանդ չգիտեն թէ զինչ խնոցին իցէ , և որ այլ ևս 'ի սոցին սակի :

Աշխանք երկրին կամ իշխանագունք կէսք ծառայեն 'ի դիւանատունս տե- րութեան Առուսաց և այնու շատանան , և ոմանք պարապեալք յորսս և 'ի զբօ- սանս՝ չգիտեն և ոչ զստորագրութիւն անուան իւրեանց ըստ վաղեմի իշխա- նագանց :

(ԱՒԱՐՏՆ ՅԱՌԱՋԻԿԱՅՈՒ)



ԱՋԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Աշխանքի պայագրութեան սկզբնաւորութեա- նը և յառաջանալուն պայմանները 2 :

Ահապարտ :— Վրոց պակասութիւնը և տպագրութեան առաջ եկած օգուտ- ները տեսնելով (Յովհաննէս Վարմա- տանենց անունով քահանայ մը՝ Ահաս- տան անցաւ , և հոն տարուան մը մէջ մեծ ջանքով առանց խնայելու ստրկի և աշխատութեան , երկու տեսակ բոլոր- զիր թափել տուաւ յամի տեառն 1616 : Ատքը Արեւիսէթ կաթողիկոսին օ- րովը սաղմոսարան մը տպագրեց Ալ- վով քաղաքին մէջ . բայց ինչպէս հա- ւանական կ'երևնայ , տեսնելով որ ջանք- քին համեմատ ընդունելութիւն մը չգը- տաւ իր աշխատութիւնը , փորել տուած գրերուն տձեութեանը համար , ինքն ալ ձեռքը ետ քաշեց . վասն զի առջի տպել տուած գիրքը միանգամայն վեր- ջինը եղաւ : Ստղմոսին ճակատը այս կերպով դրուած է . « Սաղմոս 'ի Վա- ւիթ . տպագրեցաւ սաղմոսարանս 'ի կազմարանն Վարմատանէնց տէր (Յովհաննէսին . թվին մարգեղութեանէն

1 Սա է մանրատեսակ հունգ գեղնագոյն՝ մե- ծութեամբ կորեկի՝ զոր արկեալ յեռացեալ ջուր ուտեն առանց աղի :

2 Առջի հատուածը տես երես 230 :